

1.3. *Գներ և սակագներ*

2000թ. հունվար-նոյեմբերին գների փոփոխություններն ըստ հանրապետության տնտեսության առանձին հատվածների

(տոկոսներով նախորդ ամսվա նկատմամբ)

	Սպառողական գների ինդեքս <sup>1)</sup>	Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս <sup>2)</sup>	Գների ինդեքսը կապիտալ շինարարությունում <sup>3)</sup>	Բեռնափոխադրումների սակագների ինդեքս <sup>4)</sup>	Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս <sup>5)</sup>	Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքս <sup>6)</sup>
Հունվար	101.9	100.1	99.2	97.9	98.9	101.2
Փետրվար	100.1	100.0	100.0	102.1	96.8	99.5
Մարտ	99.6	101.7	101.0	100.1	100.1	96.8
Ապրիլ	99.2	98.5	100.0	100.0	89.6	98.1
Մայիս	99.7	101.3	100.0	100.7	91.4	102.5
Հունիս	99.7	99.0	100.0	100.8	71.9	104.7
Հուլիս	98.0	100.3	99.9	102.0	81.8	104.9
Օգոստոս	98.7	98.2	100.0	100.1	95.0	101.2
Սեպտեմբեր	100.3	100.3	100.9	98.9	96.1	98.5
Հոկտեմբեր	100.0	100.0	100.1	99.2	101.0	103.1
Նոյեմբեր	100.9	99.7	100.0	101.7	101.7	99.4
2000թ. նոյեմբերը 1999թ. դեկտեմբերի նկատմամբ	98.0	104.8*)	101.0	103.7	88.8*)	108.2*)
2000թ. հունվար-նոյեմբերը 1999թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ	99.1	100.8	100.6	100.6	87.9	104.0

\*) 2000թ. նոյեմբերի և 1999թ. դեկտեմբերի փաստացի գներով հաշված:

<sup>1)</sup> Ըստ գործող մեթոդաբանության, ՀՀ-ում գների դիտարկումը կատարվում է նախորդ ամսվա 21-ից հաշվետու ամսվա 20-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքում և հանրապետության 9 մարզերում (բացի Արարատի մարզից) 400 անվանում ապրանք (ծառայություն) - ներկայացուցիչների գծով:

<sup>2)</sup> Գների դիտարկումը կատարվում է 111 արդյունաբերական բազային կազմակերպություններում՝ 283 անվանում արտադրանք - ներկայացուցիչների գծով:

<sup>3)</sup> Ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարության տվյալների:

<sup>4)</sup> Հաշվարկվում է տրանսպորտի 4 տեսակներով (երկաթուղային, ավտոմոբիլային, օդային և խողովակաշարային)՝ բեռնառաքումների դիտարկված սակագների հիման վրա:

<sup>5)</sup> Ըստ 6000 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների կողմից իրացված 61 անվանում գյուղմթերքների իրացման գների և ծավալների հետազոտման տվյալների:

<sup>6)</sup> Ըստ 6000 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների կողմից 92 անվանում արտադրության միջոցների գնման գների և ծավալների հետազոտման տվյալների:

**Սպառողական գներ.** 2000թ. հոկտեմբերին Հայաստանի Հանրապետության սպառողական շուկայում գրանցված գների հարաբերականորեն կայուն մակարդակին նոյեմբերին հաջորդել է սղած: Վերջինս հիմնականում պայմանավորված է պարենային ապրանքների գնային փոփոխությամբ՝ կապված պարենային որոշ ապրանքատեսակների սեզոնայնության, սպառման կառուցվածքի, պահանջարկի և առաջարկի հարաբերակցության, ինչպես նաև ոչ պարենային ապրանքների գների և ծառայությունների սակագների փոփոխություններով:


Ընթացիկ ամսում հոկտեմբերի համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 100.9%, այդ թվում պարենային ապրանքներինը (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)՝ 101.0% տոկոս, ոչ պարենային ապրանքներինը՝ 101.0%, ծառայությունների սակագներինը՝ 100.3%:

Սպառողական գների ինդեքսը 2000թ. նոյեմբերին 1999թ. դեկտեմբերի համեմատ կազմել է 98.0%՝ նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի 101.0%-ի դիմաց: Ընթացիկ տարվա նշված ժամանակահատվածում պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գների ինդեքսը կազմել է 96.4%, ոչ պարենային ապրանքներինը՝ 102.0%, իսկ ծառայությունների սակագներինը՝ 101.9%:

2000թ. հունվար-նոյեմբերին սպառողական գների միջին ամսական նվազումը կազմել է 0.2 %՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 0.1% հավելաճի դիմաց:


Ընթացիկ տարվա հունվար-նոյեմբերին 1999թ. նույն ժամանակահատվածի համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 99.1%, այդ թվում՝ պարենային ապրանքներինը (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)՝ 97.6%, ոչ պարենային ապրանքներինը՝ 103.2%, ծառայությունների սակագներինը՝ 101.5%, իսկ նոյեմբերին 1999թ. նոյեմբերի համեմատ՝ համապատասխանաբար 99.0%, 97.8%, 102.5% և 102.0%:

**ՀՀ սպառողական գների ինդեքսի և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի փոփոխությունները 1999 - 2000թթ. հունվար-նոյեմբերին, տոկոսներով (նախորդ տարվա դեկտեմբերը = 100)**



2000թ. նոյեմբերին նախորդ ամսվա համեմատ թե՛ սպառողական, թե՛ արտարժույթի շուկայում արձանագրվել է գների և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի հավելաճ՝ կազմելով համապատասխանաբար 0.9% և 2.0%: 2000թ. նոյեմբերին 1999թ. դեկտեմբերի համեմատ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքն աճել է 6.0%-ով, իսկ սպառողական գների գծով գրանցվել է 2.0 տոկոս նվազում: 1999թ. համապատասխան ժամանակահատվածում սպառողական գների և փոխարժեքի մակարդակն աճել է համապատասխանաբար 1.0 և 0.9%-ով:

**ՀՀ սպառողական շուկայում պարենային, ոչ պարենային ապրանքների գների և ծառայությունների սակագների փոփոխությունները 2000թ. հունվար-նոյեմբերին տոկոսներով (նախորդ ամիսը = 100)**



**Պարենային ապրանքների գներ:** Պարենային ապրանքների շուկայում, ի տարբերություն նախորդ ամսվա, երբ գրանցվել էր գների 0.1% նվազում, 2000թ. նոյեմբերին նախորդ ամսվա համեմատ արձանագրվել է 1.2% գնաճ: Ընթացիկ ամսում, ինչպես և նախորդ երկու ամիսներին, զգալիորեն աճել են ձկնամթերքի գները՝ երեք ամիսների ընդհանուր գնաճը կազմելով 1.6 անգամ: Նոյեմբերին հոկտեմբերի համեմատ գրանցվել է ձկնամթերքի 20.5% գնաճ, ինչը հիմնականում պայմանավորված է հանրապետության դիտարկված բոլոր բնակավայրերում ձկնամթերքի 7.3-34.3% գնաճով (ամենաբարձր գնաճն արձանագրվել է Վանաձորում): Երևանում ձկնամթերքի գնաճը կազմել է 21.7%:

Մրգի ապրանքախմբում ընթացիկ տարվա փետրվար-սեպտեմբեր ամիսներին արձանագրված գների 33.4% ընդհանուր նվազմանը հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին հաջորդել է գնաճ կազմելով համապատասխանաբար 1.8% և 10.1%: Նոյեմբերին նախորդ ամսվա համեմատ մրգի ապրանքախմբում գրանցված գնաճը հիմնականում պայմանավորված է տանձի (25.0%), խնձորի (21.4%), խաղողի (18.3%) գնաճով: Միաժամանակ, սեզոնայնությամբ պայմանավորված, նվազել են մանդարինի (11.6%), կիտրոնի (8.5%), ադամաթզի (0.3%) գները: Նոյեմբերին նախորդ ամսվա համեմատ հանրապետության դիտարկված բոլոր բնակավայրերում մրգի գնաճը կազմել է 5.1-30.2% (համեմատաբար բարձր գնաճ արձանագրվել է Վաղարշապատում): Երևանում մրգի գնաճը կազմել է 6.7%:

Բանջարեղենի և կարտոֆիլի ապրանքախմբում 2000թ. նոյեմբերին նախորդ ամսվա համեմատ գրանցվել է 6.4% գնաճ, ինչը հիմնականում պայմանավորված է գլուխ սոխի (85.7%), վարունգի (62.2%), կանաչ պղպեղի (54.2%), լոլիկի (33.1%), սմբուկի (25.4%) գնաճով: Կարտոֆիլի գնաճը կազմել է 1.2%, իսկ ծաղկակաղամբի, կաղամբի, գազարի, սեղանի ճակնդեղի գները նվազել են 18.8-0.6%-ով: Դիտարկված բնակավայրերից 9-ում ընթացիկ ամսում բանջարեղենի և կարտոֆիլի գներն աճել են 2.8-11.1%-ով (գնաճի համեմատաբար բարձր ցուցանիշ գրանցվել է Վաղարշապատում), իսկ Կապանում արձանագրվել է նշված ապրանքների գների 1.8% նվազում: Երևանում բանջարեղենի և կարտոֆիլի գնաճը կազմել է 7.2%:

2000թ. նոյեմբերին նախորդ ամսվա համեմատ հացամթերքի, կաթնամթերքի, կենդանական և բուսական յուղի, շաքարավազի ապրանքախմբերում գրանցվել է 0.1-3.4% գնաճ: Հրուշակեղենի, ոգելից խմիչքի և ծխախոտի ապրանքախմբերում գները մնացել են նախորդ ամսվա մակարդակին, իսկ ձվի, սուրճի, թեյի, կակաոյի, ոչ ոգելից խմիչքի գները նվազել են 0.9-0.2%-ով:

Ընթացիկ տարվա նոյեմբերին հոկտեմբերի համեմատ 2.6%-ով նվազել են մսամթերքի գները, ինչին մեծապես նպաստել են տավարի (6.5%), խոզի (5.5%), ոչխարի (1.3%) մսի գների նվազումը: Դիտարկված բնակավայրերից 8-ում մսամթերքի գները նվազել են 5.2-0.2%-ով (համեմատաբար բարձր նվազում գրանցվել է Թալիհում): Երևանում մսամթերքի գները նվազել են 3.7%-ով: Կապանում պահպանվել է մսամթերքի գների նախորդ ամսվա մակարդակը, իսկ Գյումրիում գրանցվել է 2.4% գնաճ:

**Գների փոփոխություններն ըստ պարենային առանձին ապրանքախմբերի**

(տոկոսներով)

	2000 թվական			հունվար- նոյեմբերը 1999թ. հունվար- նոյեմբերի նկատմամբ	1999թ. հունվար- նոյեմբերը 1998թ. հունվար- նոյեմբերի նկատմամբ
	նոյեմբերը				
	1999թ.		2000թ.		
	դեկտեմբերի նկատմամբ	նոյեմբերի նկատմամբ	հոկտեմբերի նկատմամբ		
<b>Պարենային ապրանքներ</b> (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	96.4	97.8	101.0	97.6	95.9
<b>Պարենային ապրանքներ</b>	95.2	96.7	101.2	93.6	94.4
հացամթերք	95.4	95.5	100.1	96.8	95.1
մսամթերք	94.2	93.6	97.4	95.0	91.0
ձկնամթերք	114.7	115.7	120.5	89.6	97.5

	2000 թվական				1999թ. հունվար-նոյեմբերը 1998թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ
	նոյեմբերը			հունվար-նոյեմբերը 1999թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ	
	1999թ.		2000թ. հոկտեմբերի նկատմամբ		
	դեկտեմբերի նկատմամբ	նոյեմբերի նկատմամբ			
կաթնամթերք	93.0	93.7	101.1	93.7	90.8
ձու	85.0	85.2	99.1	91.4	88.9
կենդանական և բուսական յուղ	92.6	92.8	101.4	90.2	94.5
միրգ	90.6	98.8	110.1	82.0	141.3
բանջարեղեն և կարտոֆիլ	94.7	114.3	106.4	88.8	86.3
չաքարավազ	114.9	109.0	103.4	95.1	89.2
սուրճ, թեյ, կակաո	91.4	90.9	99.4	92.1	99.7
հրուշակեղեն	96.2	96.2	100.0	96.5	97.6
ոչ ոգելից խմիչք	97.6	97.5	99.8	98.1	99.3
Ոգելից խմիչք և ծխախոտ	102.2	102.5	100.0	130.9	112.4

**Ոչ պարենային ապրանքների գներ.** 2000թ. նոյեմբերին նախորդ ամսվա համեմատ ոչ պարենային ապրանքների շուկայում գրանցված 1.0% գնաճին հիմնականում նպաստել է վառելիքի (պայմանավորված հեղուկ գազի 21.1% և վառելափայտի 7.1% գնաճով), հագուստի, կտորեղենի, ոսկերչական իրերի, կենցաղային էլեկտրաապրանքների, մշակույթի ապրանքների, կահույքի, գորգեղենի, տեքստիլեղենի, խոհանոցային սպասքի, լվացամիջոցների, գրենական պիտույքների 0.1-11.6% գնաճը: Միաժամանակ, անձնապիտո, գեղահարդարման, այգեգործական ապրանքների, կոշկեղենի, դեղամիջոցների, շինանյութերի գները նվազել են 0.9-0.1%-ով:

2000թ. նոյեմբերին նախորդ ամսվա համեմատ հանրապետությունում գրանցվել է բենզինի 5.3% գնաճ, իսկ դիզելային վառելիքի գծով արձանագրվել է 8.1% գնի նվազում: Նոյեմբերին 1999թ. դեկտեմբերի համեմատ բենզինի ընդհանուր գնաճը կազմել է 30.9%, իսկ դիզելային վառելիքինը՝ 16.9%:

**Ոչ պարենային ապրանքների հիմնական ապրանքախմբերի գների փոփոխությունները (տոկոսներով)**

	2000 թվական				1999թ. հունվար-նոյեմբերը 1998թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ
	նոյեմբերը			հունվար-նոյեմբերը 1999թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ	
	1999թ.		2000թ. հոկտեմբերի նկատմամբ		
	դեկտեմբերի նկատմամբ	նոյեմբերի նկատմամբ			
<b>Ոչ պարենային ապրանքներ այդ թվում՝</b>	102.0	102.5	101.0	103.2	101.3
հագուստ և կտորեղեն	96.4	97.0	100.8	95.3	99.7
վառելիք	110.7	117.8	111.6	111.0	98.7
կահույք	100.8	101.1	100.7	99.9	100.9
գորգեղեն	103.0	102.9	100.5	100.8	98.5
տեքստիլեղեն	104.0	101.8	100.4	95.4	98.4
կենցաղային էլեկտրաապրանքներ	101.3	101.0	101.3	99.2	99.1
խոհանոցային սպասք	98.8	98.1	100.2	97.8	100.9
լվացամիջոցներ	101.0	98.8	100.2	95.5	99.8
շինանյութեր	104.0	103.9	99.1	100.9	99.7
այգեգործական ապրանքներ	98.4	98.3	99.9	99.1	101.1
դեղամիջոցներ	93.7	91.1	99.6	90.1	94.7
անձնական օգտագործման մեքենաներ և բենզին	123.2	123.4	102.8	132.9	110.6
մշակույթի ապրանքներ	96.1	94.9	100.7	93.7	98.8
գրենական պիտույքներ	101.2	100.3	100.1	89.8	98.2
գեղահարդարման ապրանքներ	94.1	93.7	99.7	95.0	99.4
ոսկերչական ապրանքներ	97.7	100.5	101.3	96.4	87.2
անձնապիտո ապրանքներ	100.0	99.4	99.2	97.9	101.6

**Ծառայությունների սակագներ:** 2000թ. նոյեմբերին 1999թ. դեկտեմբերի համեմատ բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում արձանագրվել է սակագների 1.9% հավելաճ 1999թ. համապատասխան ժամանակահատվածի 15.1% հավելաճի դիմաց:

2000թ. նոյեմբերին նախորդ ամսվա համեմատ ծառայությունների սակագների 0.3% հավելաճը պայմանավորված է կապի (1.2%), հանգստի կազմակերպման (1.1%), կենցաղային (0.9%), կրթության համակարգի (0.7%), բուժսպասարկման (0.2%) ծառայությունների սակագների հավելաճով: Հանրային սննդի, իրավական և բանկային, բնակարանային կոմունալ, մշակույթի ծառայությունների սակագները մնացել են նախորդ ամսվա սակագների մակարդակին, իսկ տրանսպորտի ծառայությունների սակագները նվազել են 0.2%-ով:

**Բնակչությանը մատուցված ծառայությունների հիմնական տեսակների սակագների փոփոխությունները**

	2000 թվական				(տոկոսներով) 1999թ. հունվար-նոյեմբերը 1998թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ
	նոյեմբերը			հունվար-նոյեմբերը 1999թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ	
	1999թ.		2000թ.		
	դեկտեմբերի նկատմամբ	նոյեմբերի նկատմամբ	հոկտեմբերի նկատմամբ		
<b>Ծառայություններ, ընդամենը</b>	101.9	102.0	100.3	101.5	116.5
<i>այդ թվում՝</i>					
կենցաղային	103.7	103.6	100.9	100.9	102.9
բնակարանային-կոմունալ	100.1	100.1	100.0	100.0	120.8
առողջապահության	102.8	102.8	100.2	103.2	105.7
տրանսպորտի	102.3	102.1	99.8	100.6	99.7
կապի	101.8	103.1	101.2	99.7	183.3
մշակույթի	102.3	102.3	100.0	103.7	111.6
կրթության	103.1	103.3	100.7	113.4	112.6
հանգստի	103.6	103.6	101.1	98.3	99.7
հանրային սննդի	101.6	101.6	100.0	101.9	99.1
իրավական և բանկային	104.0	104.0	100.0	101.8	103.3

**Սպառողական գների և ծառայությունների սակագների տարածքային առանձնահատկությունները:** Հանրապետությունում դիտարկվող բոլոր բնակավայրերում 2000թ. նոյեմբերին նախորդ ամսվա համեմատ արձանագրվել է սպառողական գների 0.1-1.3% հավելաճ (գնաճի համեմատաբար բարձր ցուցանիշը գրանցվել է Վաղարշապատում և Հրազդանում (Չարենցավանում)): Երևանում սպառողական գներն աճել են 0.8%-ով:

Պարենային ապրանքների շուկայում ընթացիկ ամսում դիտարկված բոլոր բնակավայրերում արձանագրվել է 0.3-2.2% գնաճ (համեմատաբար բարձր գնաճ գրանցվել է ք. Վաղարշապատում): Երևանում պարենային ապրանքների գներն աճել են 1.0%-ով:

**Հանրապետության հետազոտված բնակավայրերում կարևորագույն պարենային ապրանքների միջին գները՝ 2000թ. նոյեմբերի 30-ի դրությամբ**

	Միս տավարի	Պանիր	Կարագ	Բուսական յուղ, լիտր	Չուլ, տասնյակի համար	Շաքարավազ	Կարտոֆիլ	Գլուխ սոխ	(դրամ՝ կգ-ի համար)	
									Կաղամբ	Խնձոր
<b>ՀՀ, ընդամենը</b>	895	1250	1455	533	389	259	119	219	86	170
<i>այդ թվում՝</i>										
Երևան	871	1317	1467	543	385	264	121	231	94	174
Գյումրի	900	1100	1317	527	375	257	137	233	70	200
Վանաձոր	833	1200	1475	520	360	247	110	180	75	140
Վաղարշապատ	1000	1200	1450	500	400	250	140	200	80	180
Թալին	1000	1200	1350	500	400	260	120	250	60	130
Դիլիջան	900	1200	1400	500	450	260	130	150	100	120

	Միստավարի	Պանիր	Կարագ	Բուսական յուղ, լիտր	Չուտասնյակի համար	Շաքարավազ	Կարտոֆիլ	Գլուխ սոխ	Կաղամբ	Խնձոր
Հրազդան, Չարենցավան	1000	1200	1500	550	400	250	100	200	80	150
Եղեգնաձոր	900	1100	1400	450	400	250	100	150	150	150
Մարտունի	800	1100	1450	550	400	250	90	250	50	200
Կապան	1080	1100	1600	500	410	262	124	156	80	180

Վերը նշված պարենային ապրանքների ընդհանուր արժեքը (յուրաքանչյուրից 1կգ-ի, բուսական յուղի 1լիտրի, ձվի տասնյակի հաշվարկով) 2000թ. նոյեմբերի 30-ի դրությամբ հանրապետությունում միջին հաշվով կազմել է 5375 դրամ, ինչը 3.7%-ով գերազանցել է նույնամուն ապրանքատեսակների հոկտեմբերի 30-ին արձանագրված ընդհանուր արժեքը (5182 դրամ): Վերոհիշյալ պարենային ապրանքներից նշված ժամանակահատվածում նվազել է միայն տավարի մսի գինը (4.7%): Բուսական յուղի գինը նախորդ ամսվա 30-ի համեմատ մնացել է անփոփոխ, իսկ մյուս 8 ապրանքատեսակների գծով արձանագրվել է 0.8-44.1% գնաճ (ամենաբարձր գնաճը գրանցվել է գլուխ սոխի գծով): Դիտարկված բոլոր բնակավայրերում վերոհիշյալ ապրանքների ձեռքբերման ընդհանուր արժեքը 0.3-4.9%-ով գերազանցել է նախորդ ամսվա նշված ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշը, ընդ որում նոյեմբերի 30-ի դրությամբ դրանց ձեռքբերման ամենացածր արժեքն արձանագրվել է Եղեգնաձորում (5050 դրամ), իսկ ամենաբարձրը՝ Կապանում (5492 դրամ):

2000թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատ դիտարկված բնակավայրերից 9-ում արձանագրվել է ոչ պարենային ապրանքների 0.1-3.0% գնաճ (համեմատաբար բարձր ցուցանիշ գրանցվել է Կապանում): Երևանում ոչ պարենային ապրանքների գնաճը կազմել է 1.0%, իսկ Թալինում պահպանվել է գների նախորդ ամսվա մակարդակը:

Բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում ընթացիկ ամսում հոկտեմբերի համեմատ հետազոտված բնակավայրերից 8-ում արձանագրվել է սակագների 0.1-1.7% հավելաճ: Սակագների համեմատաբար բարձր աճ գրանցվել է Վանաձորում, իսկ Եղեգնաձորում և Հրազդանում (Չարենցավանում) սակագները նվազել են համապատասխանաբար 2.8% և 0.1%-ով:

**Սպառողական ապրանքների գների և բնակչությանը մատուցված ծառայությունների սակագների ինդեքսները 2000թ. նոյեմբերին 1999թ. դեկտեմբերի համեմատ, ըստ դիտարկված բնակավայրերի և ապրանքախմբերի**

*(տոկոսներով)*

	Սպառողական գների ինդեքսը	<i>այդ թվում՝</i>				բնակչությանը մատուցված ծառայությունների
		սպառողական ապրանքների	<i>դրանցից</i>			
			պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	պարենային ապրանքների	ոչ պարենային ապրանքների	
<b>ՀՀ, ընդամենը</b>	98.0	97.4	96.4	95.2	102.0	101.9
<i>այդ թվում՝</i>						
Երևան	97.6	97.0	95.9	94.3	101.7	101.9
Գյումրի	99.2	98.3	97.4	96.7	102.5	104.9
Վանաձոր	98.6	97.7	96.9	96.3	101.7	103.8
Վաղարշապատ	98.7	98.4	97.5	96.4	102.8	100.7
Թալին	98.5	98.2	97.5	97.2	101.0	100.3
Դիլիջան	98.5	98.3	96.6	96.5	106.0	100.1
Հրազդան, Չարենցավան	96.9	96.4	95.7	95.2	100.0	99.8
Եղեգնաձոր	98.8	98.5	97.8	98.0	101.7	100.6
Մարտունի	98.8	98.2	96.8	96.5	104.6	102.3
Կապան	99.6	99.6	99.0	97.5	102.3	99.5

**Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս:** 2000թ. նոյեմբերին 1999թ. դեկտեմբերի նկատմամբ արդյունաբերական ձեռնարկությունների թողարկած արտադրանքի գների ինդեքսը կազմել է 104.8%, նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի 105.4%-ի դիմաց:

2000թ. նոյեմբերին նախորդ ամսվա համեմատ հանրապետությունում արձանագրվել է արդյունաբերական ձեռնարկությունների թողարկած արտադրանքի գների 0.3% նվազում: Դրան մեծապես նպաստել է թանկարժեք ու կիսաթանկարժեք իրերի (22.9%), հրատարակչական գործերի արտադրության (21.5%), սննդի (ներառյալ ալյուրի և համակցված կերերի) (0.8%) արդյունաբերության արտադրանքի գների նվազումը: Գների նվազում արձանագրվել է նաև գունավոր մետալուրգիայի (0.5%), թեթև արդյունաբերության (0.3%) ճյուղերում: Ռադիո-էլեկտրոնիկայի արդյունաբերությունում պահպանվել է թողարկված արտադրանքի գների նախորդ ամսվա մակարդակը, իսկ մեքենաշինության, անտառային, փայտամշակման, թղթ-ցելյուլոզի, էներգետիկայի, շինանյութերի, քիմիական, նավթաքիմիական և կենսատեխնոլոգիական արդյունաբերությունում գրանցվել է թողարկած արտադրանքի 0.8-26.2% գնաճ:

2000թ. նոյեմբերին նախորդ տարվա նոյեմբերի համեմատ արդյունաբերական ձեռնարկությունների թողարկած արտադրանքի գների ինդեքսը կազմել է 101.3%:

**Բեռնափոխադրումների սակագների ինդեքս:** 2000թ. նոյեմբերին նախորդ ամսվա համեմատ ընդհանուր օգտագործման տրանսպորտով բեռնափոխադրումների սակագների ինդեքսը կազմել է 101.7%: Դրան մեծապես նպաստել է երկաթուղային (2.6%) և խողովակաշարային (2.1%) տրանսպորտով բեռնափոխադրումների սակագների հավելաճը: Միաժամանակ, օդային և ավտոմոբիլային տրանսպորտով բեռնափոխադրումների սակագները նվազել են համապատասխանաբար 5.2% և 3.7%:

2000թ. նոյեմբերին նախորդ տարվա նոյեմբերի համեմատ ընդհանուր օգտագործման տրանսպորտով բեռնափոխադրումների սակագների ինդեքսը կազմել է 100.6%:

**Գյուղատնտեսական մթերքների իրացման և գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքս:** 2000թ. նոյեմբերին նախորդ ամսվա համեմատ գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքսը կազմել է 101.7%, ընդ որում գնաճ արձանագրվել է միայն անհատ քաղաքացիներին իրացված գյուղատնտեսական մթերքների գծով՝ կազմելով 3.3%, իսկ մթերող կազմակերպություններին և շուկայում իրացված գյուղ-մթերքների գները նվազել են համապատասխանաբար 0.9% և 2.6%-ով: Հանրապետության դիտարկված մարզերից 5-ում ընթացիկ ամսում գրանցվել է գյուղմթերքների իրացման 1.2-25.7% գնաճ (համեմատաբար բարձր գնաճ գրանցվել է Արմավիրում), իսկ մյուս 5-ում՝ գների 11.1-1.7% նվազում:

2000թ. նոյեմբերին նախորդ ամսվա համեմատ նկատելիորեն աճել են բուսաբուծական մթերքների իրացման գները՝ կազմելով 9.4%: Դրան մեծապես նպաստել է մրգի իրացման գնաճը (18.6%): Միաժամանակ, իրացման գնաճ է արձանագրվել բանջարեղենի (5.1%), հացահատիկային (5.7%), կերային (1.3%), բոստանային (1.9 անգամ) մշակաբույսերի ապրանքախմբերում: Ընթացիկ ամսում անհատ քաղաքացիներին և շուկայում իրացված բուսաբուծական մթերքների իրացման գներն աճել են համապատասխանաբար 12.7% և 3.2%-ով, իսկ մթերող կազմակերպությունների գծով գրանցվել է 2.2% նվազում:

Հանրապետության դիտարկված մարզերից 8-ում 2000թ. նոյեմբերին հոկտեմբերի համեմատ բուսաբուծական մթերքների իրացման գներն աճել են 0.1-38.4%-ով (համեմատաբար բարձր գնաճ արձանագրվել է Արմավիրի մարզում), իսկ Տավուշում և Սյունիքում գրանցվել է գների համապատասխանաբար 10.9% և 0.7% նվազում:

Անասնապահական մթերքների իրացման գների ընդհանուր մակարդակը 2000թ. նոյեմբերին նախորդ ամսվա համեմատ նվազել է 3.0%-ով: Շուկայում և անհատ քաղաքա-

ցիներին իրացված անասնապահական մթերքների գները նվազել են համապատասխանաբար 6.3% և 2.1%-ով, իսկ մթերող կազմակերպությունների գծով գրանցվել է իրացման գնաճ կազմելով 1.8%: Անասնապահական մթերքների իրացման գների նվազումը հիմնականում պայմանավորված է մսամթերքի իրացման գների 5.8% նվազմամբ: Դրան զուգընթաց, կաթնամթերքի, ձվի, բրդի, կաշվեհումքի ապրանքախմբերում գրանցվել է 5.8-52.8% գնաճ: 2000թ. նոյեմբերին նախորդ ամսվա համեմատ հանրապետության հետազոտված մարզերից 7-ում արձանագրվել է անասնապահական մթերքների իրացման գների 11.1-0.6% նվազում (նվազման համեմատաբար բարձր ցուցանիշ գրանցվել է Տավուշում), իսկ մյուս 3-ում՝ 2.6-6.1% գնաճ:

2000թ. նոյեմբերին 1999թ. նոյեմբերի նկատմամբ գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքսը կազմել է 94.2%, այդ թվում բուսաբուծությանը՝ 102.9%, անասնապահությանը՝ 89.0%, իսկ հունվար-նոյեմբերին նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ՝ համապատասխանաբար 87.9%, 83.3% և 92.4%:

**Գյուղատնտեսական մթերքների իրացման և գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում ըստ մարզերի**

(տոկոսներով)

	Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքսը		Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսը	
	2000թ. նոյեմբերին		2000թ. նոյեմբերին	
	2000թ. հոկտեմբերի նկատմամբ	1999 թվականի նոյեմբերի նկատմամբ	2000թ. հոկտեմբերի նկատմամբ	1999 թվականի նոյեմբերի նկատմամբ
<i>ԳԳ, ընդամենը</i>	101.7	94.2	99.4	108.4
այդ թվում՝				
Արագածոտն	96.7	91.3	101.7	115.8
Արարատ	103.0	84.7	97.8	101.7
Արմավիր	125.7	92.8	100.3	114.3
Գեղարքունիք	102.5	102.5	99.7	113.4
Լոռի	101.2	86.8	111.3	105.5
Կոտայք	96.7	107.8	102.5	104.9
Շիրակ	96.0	94.6	99.0	113.1
Սյունիք	98.3	97.1	102.4	103.6
Վայոց Ձոր	103.8	95.5	102.0	104.7
Տավուշ	88.9	81.9	92.2	107.3

2000թ. նոյեմբերին նախորդ ամսվա համեմատ գյուղատնտեսական արտադրության միջոցների գնման գները նվազել են 0.6%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է գյուղատնտեսության վճարովի ծառայությունների սակագների (9.6%), անասունների (2.5%), էներգիայի և քսայուղերի (0.4%), պարարտանյութերի (0.1%) գնման գների նվազմամբ: Մեքենասարքավորումների և դրանց պահեստամասերի գնման գները մնացել են նախորդ ամսվա մակարդակին, իսկ գյուղատնտեսական մանր գործիքների, սերմացուների ու տնկիների, շինանյութերի, բույսերի պաշտպանության միջոցների, անասնակերի ապրանքախմբերում գրանցվել է գնման 2.4-25.8% գնաճ:

2000թ. նոյեմբերին նախորդ ամսվա նկատմամբ, հանրապետության դիտարկված մարզերից 4-ում արձանագրվել է գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների 7.8-0.3% նվազում (նվազման համեմատաբար բարձր ցուցանիշ գրանցվել է Տավուշում), իսկ մյուս 6 մարզերում՝ գնման 0.3-11.3% գնաճ: